ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12–Ի «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻՑ ԲԱՑԻ՝ ԲԱՑԱՌԻԿ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՆԵՐԿՐՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ՝

Հոդված 1

2008 թվականի դեկտեմբերի 12–ի «Միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից բացի՝ բացառիկ դեպքերում կիրառվող ներկրման մաքսատուրքերի դրույքաչափերի պայմանների եւ կիրառման կարգի մասին» արձանագրությունում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1. 2–րդ հոդվածում «Մաքսային միության հանձնաժողովին» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովին» բառերով, «Հանձնաժողովի» բառերը փոխարինել «Հանձնաժողովի խորհրդի» բառերով:

2. 4–րդ հոդվածում՝

4-րդ հոդվածի 1–ին եւ 2–րդ կետերում «Հանձնաժողովի կողմից» բառերը փոխարինել «Հանձնաժողովի խորհրդի կողմից» բառերով,

3–րդ կետում «Հանձնաժողովի» բառը փոխարինել «Հանձնաժողովի խորհրդի» բառերով,

4–րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«4. Կողմերից մեկի՝ ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու ժամկետը, չի կարող գերազանցել վեց ամիսը, եթե այլ բան նախատեսված չէ Հանձնաժողովի խորհրդի համապատասխան որոշմամբ:»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման:

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման ամսաթվից 30 օրը լրանալուն պես եւ ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով Կողմ պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2012 թվականի օգոստոսի 24–ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը հանդիսանում է իր ավանդապահը:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Արձանագրության հաստատված օրինակը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից	**Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից**